

ՎԱՐՅԱՆԱԶՈՐԻԿ ՄԱՐԻԿ. *

Ձէ թէ տասը տարի . . . քսան , երեսուն ևս անցնին , դարձեալ կարելի չէ մոռանալ այն նշանաւոր և երջանիկ օրը . . . Վերջին հարցաքննութիւննիս աւարտած էինք , և հասած էինք համալսարանին դրան առջև : Քիչ մը համբերութիւն պէտք էր , — քանի մի ամսէն բացուէին պիտի դիմացնիս այդ դռներն , և մենք պիտի մտնայինք 'ի տաճար գիտութեանց , ուր ազատ համարձակ կը հնչեն ձայնք վարդապետաց (վարժապետաց) , ուր նոցա ողևորեալ ճառերն զրգուելով զունկնդիրս , 'ի մարտ կը կոչեն ընդդէմ ստութեան , 'ի մարտ ընդդէմ խաւարի և անգիտութեան 'ի ձեռն գիտութեանց . կը կոչեն 'ի տաժանելի աշխատութիւն՝ վասն հասարակաց բարօրութեան , յօգուտ հայրենեաց , խնտացէք , ընթերցողք , այսպիսի տղայական երևակայութեանց վրայ . . . Ես ինքս դառնութեան ժպիտ մի կը զգամ . յիշելով այն օրերը . . . չեմ խնտար , այլ դառնութեամբ , ցաւօք սրտի կը ժպտիմ . բայց այն ուրիշ ժամանակ էր , ուրիշ տարիներ : Այն ատեն

էին տարիք
Լոյս հաւատոյ .
Կը հաւտայինք
Սըրտի , սիրոյ ,
Կը հաւտայինք
Եւ պառաւանց
Առասպելաց :

Այն՝ անմեղութեան ժամանակ էր , այլ լուստուր , թանկագին ժամանակ , որոյ յիշատակը ցայսօր սիրտս թունդ կը հանէ , կը քաջալերէ , և կարծես , առ ժամանակ մի ինծի կը դարձնէ նոյն հաւատքը : Եթէ այժմ ցուրտ հոգերու տակ մարեցաւ այդ լուստուր երևակայութիւնը , եթէ զինի մաքուր հաւատոց

Ուրիշ տարիք յաջորդեցին .
Տարիք նոր նոր փորձառութեան ,
Եւ մեր հաւատքն ըսպանեցին
Զարութիւններ , սուտեր մարդկան .
Այլ չենք հաւտար ոչ գուն , ոչ ես
Ոչ գրգռանաց , ոչ սիրոյ ևս :
Զափի , կըշռոյ արդ կ'անըրէն
Անտարբեր խօսք բարեկամին ,
Եւ մեր սըրտեր ալ չեն հաւտար
Ոչ զճշմարտան և ոչ զարդար :

սակայն և այնպէս , դարձեալ թող սրբազան մնայ անցեալ սուրբ հաւատոց , լուսաւորեալ անկակալութեանց ժամանակը : Անբաղդ են անոնք , որք ունեցած չեն այդ «Մաքուր հաւատոց և անմեղ երևակայութեան» տարիներն . որով զուրկ են այն քաղցր յիշատակներէն , և տասն և ութ տարեկան հասակներէն , արդէն փորձ և իմաստունացեալ են , ինչպէս ծերերն :

Այդ երջանիկ օրը՝ մենք ունեցանք 186 . . . յունիսի 16 :

* Ռուս վերնագիրն է ДОЖДАЛСЯ , որ հայերէն թարգմանի հոսոս վշխանին (չեղձօրէն) :

— Բարի տեսանք Պ. Բժիշկ, կատակով զրուցեցի Մասլովին՝ ձեռքը սխմելով, որ մարզողին չորրորդ դասարանէն՝ միտքը դրած էր մտնալ բժշկութեան ակադեմիայն :

— Դու, կարծեմ, սապոն եփելու կը պատրաստուիս . խնտալով պատասխանեց :

— Ոչ . արուեստախօսութեան (technologie) մասն , Մասլովն ընտրեց , — ես բանասիրութեան (philologie) :

Ամենքս մեծ ուրախութեան մէջ էինք : Որոշեցինք հանդիսապէս տօնել մարդոցական ընթացից աւարտումը , մեծահաց խնջոյք մը սարքելով : Բայց ճւր, որուն տունը : Այս հարցման վրայ երկար մտածելու հարկ չկար , յարմարագոյնն Մախալովի տունն էր : Նախ , որ նա ոսկի միտալով աւարտեւ էր , երկրորդ՝ կաշիքի չէր այդ հանդէսն ուրիշ տեղ սարքել լաւ կերպով , որ ըլլայ չէն , զուարթ եւ տաքուկ , ինչպէս Պաւլէ Մախալովի փոքրիկ բնակարանին մէջ . արդէն՝ նորա բարի եւ ազնուասիրտ մայրը , մենք բոլոր ընկերք կը սիրէինք եւ կը յարգէինք : Կարելի չէր չսիրել եւ չյարգել այդ պարզունակ կինն : Սա ժամանակաւ աղքատ աստիճանաւորի մը կին էր , որ քաղաքական պաշտօնարաններէն մէկուն մէջ ծառայած էր . այժմ՝ Մարթա , Մախալովի մայրը , այրի մնացեր էր իր միակ որդւոյն . եւ գիշեր ցորեկ կ'աշխատէր անդադար , որով միանգամայն եւս՝ աղաչելով պաղատելով բարեբար մարդկանց , կրցեր էր զորդին լաւ ճամբու մէջ դնել : Իր բերնէն կերն ու խումը կտրելով , գիշերներ անքուն անցընելով , նա կը հագուեցնէր զիւր Պաւլիկը , թէպէտ աղքատ՝ այլ կոկ :

Հաստատ միտքը դրած՝ որ զորդին մարդ ընէ , զարմանալի արութեամբ կը դիմեր նպատակին : Թիւ եւ համար չունէին նորա աղաչանքներն եւ խոնարհ երկրպագութիւններն . հարուստ եւ պաշտօնատէր մարդոց դռներուն շեմերը կը մաշէր երթալով գալով : Սակայն կը յալոյցընէր : Պաւլէ մտաւ մարդոց ձրիաւ վարժ աշակերտ , գրքերն ձրի արուեսցան իրեն . երրորդ տարին բարեբարաց հաշուին ուսնիկ եւ նշանակեցին : Մարթա Պարիսովիտայի տնտեսական հաշուին մէջ եօթն ու կէս րուպլին՝ մեծ նշանակութիւն ունէր : Փոքրիկ սենեակ մը վարձեց , եւ շարունակեց առաջնական պէս աշխատիլ : Զորրորդ դասարանէն Պաւլէ ունեցաւ ամիսը չորս րուպլինոց դասեր . հինգերորդին մէջ աւելցան դասերն : Քաջ կը սորվէր ինքը , դասատուք կը սիրէին զնա . որ տուններն որ դաս կուտար , գոհ էին իրմէ : Կարճ էր հասակաւ , թխամորթ , սակաւ մի կարճատես , ամօթխած եւ ոչ ժիր : Աշխատասէր եւ զգօն . գիտցածը սիրով կը հաղորդէր ընկերաց . Մախալով ամենքէն կը սիրուէր , եւ ամեն օր ընկեր պակաս չէր անոր քովէն . կիրակի եւ տօն օրեր՝ նորա սենեակը միշտ լեցուն կ'ըլլար : Բանի որ փոքր տղայ էինք , խաղալու , ժամանակ անցընելու հօն կը ժողովէինք . վերջին տարիներ , նոր գրքեր կարդալու՝ մասնաւորապէս Պէլինսքիի եւ Տոպոլիւպովի գրածներն . դասատուաններ կ'ընէինք կարդացածներնուս վրայ , կը վիճէինք եւ ապագային մէջ երեւակայութեամբ կը պտրտէինք : Մարթա Պարիսովիտա երջանիկ եւ գոհ իր զաւակովն , միշտ զուարթերեա կ'ընդունէր զմեզ :

— Բարի եկաք , հազար բարի , գիտնական ասպետներս , կը զրուցէր , եւ խնտալով ձեռքերնիս կը սխմէր :

Երբ սկսէինք կարդալ եւ վէճերու ձայներն կը բարձրանային , Մարթա Պարիսովիտա կ'երթար :

— Թող Գրիստոս հետերնիդ ըլլայ , խօսեցէք հարկաւոր բաներու վրայ , ես երթամ , որ արգելք չըլլամ :

— Ի՞նչ կ'ըսէք , դուք մեզի արգելք չէք , կը զրուցէինք երբեմն :

— Ի՞նչպէս արգելք չեմ , դուք երիտասարդ . . . յայտնի բան է : Շատ բան ունիք խօսելու . ես ձեր դիմաց , իբր թէ կամաւ զրուած . . . արգելք եմ :

Այսպէս զրուցելով և սիրալիւր աչքերով որդւոյն նայելով՝ կը հեռանար մեզմէ տանտիկնոջ քով, Զկար մեր մէջէն մէկն՝ որոյ Մարթա Պարիսոփա մասնաւոր ծառայութիւն մը ըրած չըլլար։ Դրսի քաղաքներէն եկողներուն նա մօր տեղ էր։ Մէկուն զգեստին պատուածքը կամ քակուածը կը տեսնայ, — իսկոյն կը կարկտէ, միւսը կը հիւանդանայ։ — Եթէ կարելի է տնական միջոցներով բժշկել, ձեռք կը զարնէ բժշկելու։ Անգամ մը, դրսեցի մը հիւանդացաւ, որ նոյն տան մէջ կը բնակէր։ Մարթա Պարիսոփա, ինչպէս իր գաւակն, այնպէս խնամք տարաւ։ Բժշկի կը վազէր, տածերը (cataplasme, քստաքս) ինքը կը փոխէր, ճարը ինքը կու տար, և օրը քանիցս կ'երթար կը նայէր, կը հոգար։ Երբ սկսաւ կաղզուրիլ, և տունէն դեռ փող եկած չէր, խնայելով իրմէն կը տրելով՝ ամբողջ շաբաթ մը կերակրեց տկարը, հաւէ ապուրով և խորոված հորթով մտով։ Երբ նեղը մնայինք՝ Մարթա Պարիսոփա մեզի մէկ և մէկ ու կէս ռուպլի փոխ կու տար։ շատ բաներու մէջ խորհուրդ կը հարցնէինք։ շատերնուս ճերմակեղէնները նա կը կարէր, լուացքնիս կը լուար, շատ անգամ ձրի և միշտ ածան ջան զուրիշներն։

Նա խելքէ մտքէ վեր կը սիրէր զիւր Պաւլէն, և պատրաստ էր ընկել աւան բան, չէ թէ միայն անոր, այլ և ամենուն որոնք նորա ընկեր էին։ Ի՞նչ որ զնա կը սիրէր...

— Մի միայն հոգս մտածմունքս իմ Պաւլիկս է, կ'ըսէր. սիրտս նորա համար կը մաշի։ Աստուծմէ ուրիշ խնդիրք չունիմ, բայց եթէ մինչև այն օրը ապրիմ, որ տղաս մարդ եղած տեսնամ։ Համենի այն լուսաւոր վայրկենին, որ նա աւարտէր համալսար (երբէք չէր կարնար ուղիղ հնչել համալսարան բառը, և միշտ թողութիւն կը խնդրէր. « Երեքեք խեղճիս, չեմ կարնար ես այդ բառը արտաբերելու ») և առաջ երթալու ճամբուն մէջ ըլլար...

Մենք կը մխիթարէինք զինքը, զուրցնելով, թէ շուտով ամենքնիս միասին կ'երթանք Բեդրպուրի...

— Շնորհակալ եմ ձեզմէ, իմ սիրուններս... շնորհակալ եմ տուած մխիթարանքներնուդ։ Հարկաւ ես զինքը մինակ չեմ թողուր։ մէկտեղ կ'երթամ, որչափ ոյժս, զօրութիւնս բաւէ, կ'աշխատիմ, կ'օգնեմ։ Դու, Տէր ողորմած, թաւաւոր երկնաւոր, տուր նմա աւարտել պէտքին պէս սկսած գործը։

Նորա սրտին արդարացի փափաքը, մասամբ արդէն կատարուած էր։ Ո՛ր լաւագոյն կերպով կարելի էր սարքել այդ հանդէսը, եթէ ոչ ի Մախալովեանց սենեկին։ Եւ ինչ հանդէս, ինչ տօն զուարճութեան, եթէ Մարթա Պարիսոփա ներկայ չգտնուի, որոյ այդ օրը մեզմէ աւելի ուրախալի է, և որոյ՝ մենք ամենքնիս շատ ու շատ պարտական ենք։

Որոշուած էր խնջոյքը նոցա տան մէջ կատարել։ Բոլոր տնտեսական հոգը յանձնուած Մարթա Պարիսոփայի։

Մեր մէջ հաւաքած փողը նորա ձեռք տալով, զրուցեցինք։ — « Մարթա Պարիսոփա, կառավարէ ինչպէս գիտես։ Պաւլէ՝ առաջին աշակերտ և ոսկի միտաւրով աւարտեց։

— Սիրելիք իմ, հատուր հոգւոյս, որչափ որ ձեռքէս գայ. պատասխանեց նա, աչքերն ուրախութեան արցունքով լեցուած, ինքն անսահման երջանիկ մայր։

— Կը յուսանք, որ Մարթա Պարիսոփա, այսպիսի մեծ օրուան համար... կատակ էր զրուցածնիս։

— Այո՛, աղանձակեք։ Ինչպիսի օր, սիրտս կը ճխայ, բացատրել չեմ կարող, խնտալ կ'ուզեմ, աչքերէս արցունք կը վազէ։ Կ'ուզեմ զամենեւոր զգուշ, համբուրել, ինծի ինչ կ'ըլլայ՝ ինքս չեմ հասկընար... Լաւ է, լաւ է... փրտա ուրախ, երբէք այսպէս բան եղած չէր ինծի։

— Ի՞նչ կ'ըլլայ, Մարթա Պարիսոֆնա, ըսաւ մեզմէ մէկը, եկ պազտը, փնք :

— Պառաւ եմ . . . Զատիկին, Զատիկին :¹

— Այսօր մեզի Զատիկ է, Մարթա Պարիսոֆնա :

— Շիտակը այնպէս է, տիրելիքս . . . վերջերս ինչ պիտի ըլլայ :

— Շատ լաւ կ'ըլլայ . կ'երթանք Բեդրպուրկ, կը մտնանք բարձրագոյն ուսումնարաններ, կ'աշխատինք, կ'աւարտենք և գործոյ ձեռք կը զարնենք :

— Աստուած տա՛ր, որ զրուցածնիդ կատարուէր : Տիրոջ վրայ է յոյսս . . . կը մտածեմ, կը մոմտամ. հեռու աշխարհք է, մարդիկներն օտար . . . ուրիշ բան է մարդու ծնած տեղը . . . ինչ ընելու է :

— Է՛, աւելորդ հոգեր, Մարթա Պարիսոֆնա . . . այսպիսի օր տրտմու, թիւնը մէկ կողմ դնելու է, վշտանալ պէտք չէ. զուարճութիւն, ուրախու, թիւն . . . պատրաստեցէք հասարակաց խնջոյք :

— Թող ձեր կամքն ըլլայ . . . վերջը կը մտածենք . . . երթամ որ երեկոյ յեան ամեն բան պատրաստ ըլլայ . . . :

Մեր հանգէսը կարգէ դուրս չէն եղաւ . շատ խնտացինք, աղմուկ, ցնորք, ենթադրութիւնք, երգեր երգեցինք, նաւակով զուարճութեան ելանք. չայերնիս քաղդէն դուրս վանքին պարտիզին մէջ խմեցինք. դարձանք վերատին մեր փոքրիկ սենեակը, ակրատի նստանք, երկու գինւոյ շիշեր դատարկեցինք. պար ևս բռնեցինք, և մեր լանսէ խաղացող տիկնայց ըրած ձեւերուն վրայ՝ այնչափ ծիծաղեցանք՝ որ աչքերնէս արցունք եկան, — երջանիկ և չէն — ամեն մարդ տուն դարձաւ առաւօտեան ժամը չորսին տուն :

Քանի մ'օրէն ցրուեցանք ոմն այս՝ ոմն այն կողմ, պայմանաւ որ զիրար Բեդրպուրկ գտնանք :

Բ .

Բեդրպուրկի մէջ Մախալովեանք վարձեցին փոքրիկ սենեակ մը, վասի. լեվզերի¹ կղզոյն 13երորդ գծին (փողոցին) վրայ : Պաւլէ՛ առաջին տարին, ձրի վարժեցաւ, այլ ռոճիկ չտուին ('ի հաշիւ բարերարի) : Ինչպէս առաջ, նոյնպէս և այժմ, Մարթա Պարիսոֆնա բոլոր ձեռքէն եկածը ըրաւ. համալսարանին վարժապետաց բոլորին դռներն զարկաւ. խոստացան ռոճիկ կապել Պաւլէին՝ երկրորդ դասարանին մէջ :

— Գէթ աչքերնիդ վրան ըլլայ, կ'աղաչէր, ասդին անդին դասեր Պաւլէին, — ձեր մէկ խօսքը թանկ է, օգնեցէք որբին :

Շատ պարզութիւն և միամտութիւն կար նորա խօսքերուն և աղաչանաց մէջ. այլ ամեն մէկ խօսքը կը յայտնէին այն ջերմ սէրը՝ զոր ունէր առ որդին, որ և կու տար նմա ոյժ կրելու այնչափ հոգ և գիմանալու տաժանելի կենաց. անոր միակ և սաստիկ ցանկութիւնն էր՝ տեսնալ զորդին մարդ ըլլալու ճամբուն մէջ, այդ փափաքով միայն կ'ապրէր նա վերջին տարիներն : Համալսարանին Տեսուչն և շատ վարժապետք ուշադրութիւննին դարձուցին Պաւլէին վրայ, և խոստացան օգնել իրենց կողմանէ :

¹ Թուաց օտորութեամբ՝ Ս . Զատիկն օրը Քրիստոս յաբէաւ երգելէն վերջը, աւագերէցը՝ առ հասարակ ամենայն Ժողովրդականաց բերան առ բերան ուրախութեան համբոյր կու տայ . Ժողովուրդք ուր տեղ որ մէկ մէկու հանդիպին կը պազուորեն, մէկը կ'ըսէ Քրիստոս յաբէաւ, միւսը՝ ձեռնաբազէա յաբէա :

¹ Василевский остров — Վասիլեան կղզի կը կոչուի Բեդրպուրկի երկրորդ մասը, նեւայ գետին միւս կողմը :

Երկու ամիս մեծ կարօտութիւն քաշեցին Մախալովք. օրեր եղան որ նորա բաւականացան պատուո մի սև հացով և դաւաթ մի անսեր կաթով: Այդ ան պաճոյճ ճաշիկին համար ևս հարկ կ'ըլլար որ Մարթա Պարիսոփնա դռնապանէն փոխ առնու հինգ կամ վեց քորէկ, և այնպիսի աշխատութեանց տակ մօտէ՝ որով իր արդէն տկար աչքերն բոլորովին ցաւեցընէ: Ամեն մէկ քորէկին վրայ կը դաւար. 13 գծէն (փողոցէն) մինչև Կառոխով փողոցը կ'երթար, որպէս զի եօթը քորէկի առնու այն բանը՝ ինչ որ կղզւոյն մէջ ուլթի կը ծախուէր: Յոգնել չէր գիտեր. քաջութեամբ կը կրէր ցուրտն ու քաղցը, իր Պաւլիկին համար, որպէս զի նա կարգայ և սորվի: Չունէր և ինքն Պաւլէ հանդչելու ժամանակ. դասերէ ազատ ժամանակ ընդօրինակելու կը պարապէր, տպարաններու սրբադրութիւն կ'ընէր, թերթ գլուխ քսանուհինգ քորէկով: Մայր և որդի անդադար կ'աշխատէին, քաշութեամբ դիմանալով կարօտութեան դէմ, — այլ երկուքն ալ զուարթ և չէն էին: Բնակարանին փոքրիկ, լոյսը նուազ, այնպէս որ Պաւլէի կարգալու համար՝ հարկ կ'ըլլար պատուհանին մօտենալ և աթոռի մը վրայ ելլել: Այդ բնակարանին մէջ դարձեալ, ուսանողքս կը ժողովէինք, ընդհանրապէս մէկ քաղաքացիք. տաք տաք խօսակցութիւնք կ'ըլլային, քաշաբութիւնք, մխիթարութիւնք, վէճք, և գրեթէ միշտ չայէն և համեստ ակրատէն ետև, 'ի հաշիւ հասարակաց, տունը կը թնդար երգոց ձայնիւ *Gaudiamus igitur* « Ուրախ լիցուք ուրեմն », *дѣйствуемъ « կաղնիք »*: Մարթա Պարիսոփնա չայ լեցընելու միջոց՝ սիրով ուշ կը դնէր ռուսներու խօսակցութեանց. և որչափ որ չէր հասկընար, այնչափ աւելի կը զուարթանար:

— Ես ոչ անգամ մօքէս կ'անցընէի՝ որ Պաւլէս այսպիսի գիտնական մարդ պիտի ըլլայ. պարզամիտ և բարեմիտ կինը կը զմայլէր, — արժանացուց Աստուած տեսնալու. քովը կը ժողովին ուսումնական ընկերներն, և ինչ խօսակցութիւններ կ'ընեն, մոտիկ ընելով չես կշտանար...

— Ինչ բանի վրայ է խօսածնին, կը հարցընէր տանտիկինը:

— Աստուած դիտէ... գիտնական, լաւ բաներու վրայ. ես տգէտս չեմ հասկընար, այլ կ'իմանամ որ կարգաւորեալ խօսակցութիւն է:

— Երեւայ որ ապրուստի մասին նեղութիւն ունիք. անգամ մը մեղմով հարցուց տանտիկինը. զիշերներն այնչափ երկար կը նստիք՝ կ'աշխատիք. անգամ մը ժամը երեքին արթնցայ, ձեր ճրագը կը վառէր:

— Ինչ ընելու է, պէտք է աշխատիլ՝ վատարելի. ֆլաս չունի, թող Պաւլէիս գործն յայդի, ես ինձի չեմ մեղքընար... Աստուած տար, որ նա աւարտէր. այն ատեն հանգիստ կ'առնում. կը հանգստացընէ նա իր ծեր մարիկը:

Պաւլէին գաղտուկ, վախճալով որ չարգիլէ, Մարթա Պարիսոփնա լուացաւ, րարի մը քով մտաւ: Որդին համալսարան, ինքն լուացքի կ'երթար: Տանտիկինը յանձն առաւ պատրաստելու կերակուր, երբ միջոց ունենան տաք կերակուրի: Ժամը հինգին՝ տպարանէն տուն կը դառնար Պաւլէ, ուր կը հանդիպէր համալսարանէն դառնալու միջոց. արդէն Մարթա տուն դարձած կ'ըլլար: Վեց, եօթն ամիս այս կերպով անցուցին: Չատկին առաջարկեցին Պաւլէի դասեր. այն դրութեան մէջ՝ չատ չահաւոր. չաբաթը հինգ դաս, — ամիսը քսան բուպլի:

— Փառք քեզ, Տէր. հանգիստ կ'առնու տղաս, ասաց Մարթա և երեսը խաչ հանեց. — կարնայ հիմա թողուլ տպարանը. ապա թէ ոչ առողջութիւնը կը ֆլասի:

Ինք զինքը բոլորովին կը մոռնար պառաւր. եթէ տպարանը կը ֆլասէր Պաւլէին առողջութեան, լուացարարութիւնը իրեն ոյժը՝ զօրութիւնը կը տանէր. եթէ մեք այդ բանին տեղեկութիւն չունենայինք և որդւոյն չիմացընէինք, Մարթա՝ Պաւլէի դասեր ունենալէն վերջն ևս պիտի չարունակէր լուացարաւ:

րութիւնը : Խոստիւ արդիւնց Պաւլէ մօրը՝ որ այդ տաժանակիր աշխատութենէն ետ կենայ : Դագրեցաւ լուացքէ՝ և սկսաւ խանութներէն ուրիշ աշխատութիւն ներ առնուլ :

— Աղանիկը իմ, կը բողբէր, ինչ խոհանոց, ինչ տանտիկնութիւն ունիմ, որ անով միայն զբաղիմ : — մեծ փող չէ քսան բուպլին, բաւական չէ ապրուստի, ես աշխատութեան սորված եմ... Պաւլէս՝ առողջութեան մասին տկար է : Աստուած տայ որ ուսմունքը լմնցնէ : սորվիր դժար բան է : կը տեսնամ որ նա սրտանց կ'աշխատի : ես նստիմ նայիմ... Զէ, չէ, աղանեակը, այդ ըլլալու բան չէ : Նա թող մէկ երկու ժամ հանգիստ առնու, թող դադրի գրելէն : թող ես աշխատիմ, ինծի ի՞նչ կ'ըլլայ : Աստուած տար որ մէյ մը զինքը կարգի դնէի, ուրախանայի, այն ատեն ես ևս կը հանգչէի : Պէտք է որ նա իրեն խնայէ, զեռնոր՝ նոր ապրելու կը սկսի :

— Զեզի ևս մեռնիլ փութալու հարկ չկայ, կ'ըսէինք մենք : աշխատեցող՝ մեռնիք... կ'աւարտէ Պաւլէ : — նոր՝ նոր պիտի սկսիք ապրիլ... ապրեցէք և խընդացէք ձեր որդւով :

— Իմ սպասածս ևս այդ վայրկեանն է... Աստուած արժանի ընէ տեսնալու, որ աշխատանքներս չեն կորսուած : վերջը թող սուրբ ըլլայ իր կամբը : կու տայ կեանք, կը խնդամ որդւովս, կը հանդիմաշխատանքէ... չէ, գրուած չէ ինձ ապրիլ, չեմ իշխեր տրտնջալ : Թող միայն ամուր պահէ երկնաւոր թագաւորս, իմ տղաս : երջանիկ թող ընէ : թող ամուսին մը տայ՝ որ զինքը սիրէ, ինչպէս ես կը սիրեմ, և խնայէ, ինչպէս ես կը խնայեմ, և հոգայ նորա համար... »

Մարթա Պարիսոփա չկարցաւ արցունքներն բռնել : աչքերն սրբելով աւելցուց .

— Մեծ բաղդ է լաւ կինը : մարդ բաղդաւոր կ'ըլլայ բոլոր կենաց մէջ, նեղութիւններն կը թեթեւան, ամեն բան կը հարթուի : Տէրը փրկէ չար կնիկէն : կը կոտրէ մարդուն մէջքը : սրչափ օրինակներ : քանի քանի մարդիկ, շատ լաւ մարդիկ, կորսուեցան կնկան պատճառաւ : —

Պաւլէին դասերուն պատճառաւ՝ նոցա ապրուստը բարւոքեցաւ, նոր զգեստ մը յինեց իրեն, և սկսան ամեն օր տաք կերակուր ուտելու : Զգեց ապաւանի սրբադրութիւնը, և զատիկն չաբժէն սկսաւ պատրաստուելու մօտադայ հարցաքննութեան : փառաւոր կերպով անցաւ հարցաքննութենէ : Տեսուչն ինքնին գովեց զՊաւլէ, և խոստացաւ անպատճառ ռոճիկ նշանակել նմա՝ ի հաշիւ բարերարաց : Յոռնիսի գնաց Պաւլէ ի Նով—կորոտ, տղայք մարզոցի համար պատրաստուելու : Մարթա Պարիսոփա մինակ մնաց Բեգրպուրկի մէջ : Նոյն տարին ես տուն չդարձայ, շատ անգամ այցելութիւն կ'ընէի պառուսին : Պաւլէին գրերով միայն կ'ապրէր նա, ստանալուն պէս՝ հինգ անգամ առջը կարգալ կու տար : Օգոստոսի՝ որդին դարձաւ : սկսան դասախօսութիւնք ի համալսարանին : խոստացուած ռոճիկը ստացաւ, դրսէն դասեր աւելցան, Մախալովեանք լաւ շտկուեցան :

Ի՞նչպէս գործի վրայ էր պառաւր նոր վարձած բնակարանին մէջ արժանոց աթոռներն կարգաւ չարելու : Պաւլէին գրասեղանը յարմարադոյն տեղը դրաւ, թաղիք դամեց պատուհանին տակ՝ որ ցուրտ չառնու Պաւլէ : Պարիսոփայի փափաքած ժամանակը կը մօտենար, երջանիկ վայրկեան : պառաւը կ'աշխուժնար : չէ թէ տարիքը կը ծանրանային վրան, այլ ընդ հակառակն կը պակսէին...

• կը շարունակուի :